ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ

Իր հարուստ կյանքի 85 տարին բոլորեց ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ, վրձնի անզուգական վարպետ Մարտիրոս Սարյանը:

Ստեղծագործական ասպարեզ իջնելով մեր դարասկզբին, նա իր երկարամյա բեղմնավոր գործունեության ընթացքում հարստացրեց հայ-

XIX դարի վերջի համաշխարհային գեղանկարչության մի քանի խոշոր ներկայացուցիչներ սերունդներին թողեցին ոչ միայն արվեստի բացարձակ արժեքներ, այլև սաղմնավորեցին սկզբունքներ, որոնց զարգացումը պիտի տար ժամանակակից արդյունքները։



բենի և համաշխարհային նկարչական արվեստը բարձրարժեք կտավներով։ Սարյանի բազմաժանր արվեստը մի նոր փուլ նշանավորեց ոչ միայն բնանկարչության, հողերանական դիմանկարների, այլև թատերական նկարչության ասպարեզում։ Ֆրանսիական նշանավոր բանաստեղծ Լուի Արագոնը իր սեղմ և խոր բնութագրության մեջ հատկապես շեշտում է Սարյանի արվեստի համաշխարհային նշանակությունը. «Գալիք դարերը մեր Սեզանի և Մաթիսի կողքին Սարյանին «պիտի հատկացնեն առաջնակարգ տեղ»։

Այդ սկզբունքներին բնդհուպ մոտեցած երիտասարդ նկարիչները Եվրոպայի գեղարվեստական կենտրոններում սկսեցին խմբավորվել իրրև առանձին դպրոցներ ու հանգես եկան դեկլարացիաներով, հրապարակեցին արվեստի իրենց փիլիսոփայությունը։ Բայց յուրաքանչյուր ստեղծագործության գեղարվեստական արժեքը որոշվում է այն չափանիշով, թե «ինչքանով լրիվ է հեղինակի փիլիսոփայությունը իր երևակայությամբ ներծծված, թե ինչքան հուզական է նրա երևակայությունը և թե ինչպիսի հաջողությամբ է իրականացված այն՝ տեսողական ձևերի ու

գույների մեջ» (Լ. Վենտուրի)։ Եվ պարզվեց, որ նրանցից քչերն են ընդունակ կերտելու արվեստի այնպիսի կոթողներ, ինչպիսիք ավանդել էին իրենց ականավոր նախորդները։ Պարզվեց նաև, որ այս քչերի թվում կայուն տեղ են գրավել արվեստագետներ, որոնք ոչ մանիֆեստներ են հրապարակել, ոչ էլ՝ բանավեճ մղել։

Վերջիններից էր Մարտիրոս Սարյանը։ Հետևելով իր բնական հանճարի թելադրանքին, նա կամեցավ ինքն իր հետ լինել, չկրկնել ուրիշներին և արտահայտել իր աշխարհը։ Հենց այս՝ նախապաշարումներից ազատ նչրքին մղումներով էլ Սարյանը դիմեց անցյալի ու ներկայի այս կամ այն ավանդին, ձևոք զարկեց այս կամ այն արդիական խնդրի լուծմանը։ Եվ այդպես, զգացումի և մտքի բացառիկ ներդաշնակությամբ նա 1910-ական թթ. ստեղծագործում էր իրրև իրոք նորարար արվեստագետ։

Անցյալ դարի վերջին Գոգենը վերականգնեց գեկորատիվ-մոնումենտալ, սինթետիկ գեղանկարչության վաղեմի սկզբունքը՝ պատմական նոր դարաշրջանում հիմք գնելով «ինչքան հարթ, այնքան արվեստ» (Մաթիս) ձգտմանը։ Սեզանը Գոգենի նկարները որակեց իրրև «տափակ պատկերիկներ»։ Նա ժխտեց գոգենյան գեղանկարչության սկզբունքները առհասարակ և իրագործեց կոնստրուկտիվ-ծավալային արխիտեկտոնիկ տրվեստի իր կողմնորոշումը։ Տարբեր խառնվածքի տեր երիտասարդ նկարիչներ կիրառեցին այդ հիմունքները առանձին-առանձին և իրենց հերթին կերտեցին գլուխ-գործոցներ

Ինքնուրույնաբար զարգացնելով գոգենյան գիծը, Սարյանը զողեց այն Սեզանի սկզբունքի հետ՝ տալով ոճական մի փառահեղ միասնություն, որը մեր դարի համաշխարհային արվեստի պատմության մեծ հաղթանակներից է։ Այդ միասնության հիմքում, մյուս կողմից, ընկած են նաիրյան երկրի խստապարզ բնության հանճարեղ ըմբռնումը և հայ ազգային մանրանկարչության, որմնանկարչության, ճարտարապետության յուրահատկությունների ստեղծագործական յուրացումը։

Սեզանյան և գոգենյան իրար բացասող ձրգտումների հաշտեցումը, Արևելքի և Արևմուտքի խիստ ուրույն, մեկը մյուսից տարբեր գեղագիտական մտածելակերպերի փայլուն համակցումը արտահայտված են գունա-պլաստիկական այն նոր որակով, որը կոչվում է «սարյանական»։

Ինչպես ավանդների, այնպես էլ աշխարհի հանդեպ Սարյանը ցուցաբերում է հանճարի վերաբերմունք ազատ, ակտիվ ու մոլեգին, իրականի և ֆանտաստիկականի միաձուլման հանգուգն կամքով տոգորված։ Օբյեկտը նկարադաշտի վրա արվեստային արժեքի բերելու համար նա այն տարրալուծում է իր նախնական ձևերին։ Սրանք, արգեն, բացառում են էմպիրիկ փորձի հաղորդած մանրամասները, առարկայական-նյութեղեն պատրանքը։ Երևակայաբար ստեղծված այդ նախաձևերը նա բնութագրում է իրրև գծային, գունային, տարածական ինքնարժեք տարրեր, բնգգծում է սրանց հակագիր ու համագիր ռիթմերը, գտնում քանակական ու որակական հարաբերությունների սահմանները։

Այդ ամենի հանրագումարը տալիս է գեղանկարչական ընդհանուր հաստատունների մի համակարգ, որը ներկայանում է որպես և՛ օբյեկտի տեսողական անտիթեզը, և՛ նրա հոգեկան արժեքավորումը — գեղանկարչական մի փաստ, որը երևակում է հավերժ կայուն ու հավերժ շարժուն ձգտումների մի ներքին գերլարվածություն։ Հենց այս է սարյանական հրգեհվող կրքի ու մոնումենտալ հանգստության հավասարակշռության մարմնացումը։

Դժվար չէ Սարյանի մոտ նկատել մեր անցյալի մեծ արվեստագետներից ոմանց ստեղծագործական խառնվածքի նորովի վերապրումը։ «Միտք և զգացում — զգացում և միտք։ Ձեմ սիրում ոչ փխրուն սենտիմենտալիզմը, ոչ լոգիկայի սառն պեգանտիզմը արվեստում»,— սիրում է կրկնել Վարպետը։ Իր լավագույն երկերում նա գրսևորել է այդ սկզբունքը մի կարողությամբ, որը իրավունք է տալիս նրան համարվելու Նարեկացու և Ռոսլինի արժանավոր հետևորդը։ Ե՛վ Նարեկացու, և՛ Ռոսլինի, և՛ Սարյանի արվեստին հատուկ է մի կողմից զգացմունքների ու ապրումների տարերային փոթորկումը, մյուս կողմից՝ չափավորող ռացիոնալիզմը։ Ներհակ գծերի երկմիասնություն է դա, որ անընդհատ ապրում է խորիմաստ ու հանդիսավոր պաթետիզմով։ Որքան էլ նուրբ իրենց զեղումներում, երբեմն էլ խորթ է կամերային, ինտիմ լիրիզմը։ Նրանց ինքնարտահայտումը ներծծված է «էպոսային» հզոր շնչով։

Եվ այժմ էլ, չնայած առաջացած տարիքին, Վարպետը շարունակում է իր ստեղծագործական նոանգուն աշխատանքը։ Նրա այսօրվա գործերն էլ թարմ են, կենսահորդ ու սարյանական։

Սարյանի արվեստը կենսահորդ է, երջանկացնող։ Դա մարդու հաղթանակի, մարդու ստեղծագործական ուժերի ակտիվացման անսպառ աղբյուր է։ Խորապես ազգային իր արվեստով Վարպետը բարձրացնում է համամարդկային իդեալներ ու գաղափարներ։ Բարձրացնում է գեղանկարչական մի լեզվով, որի արմատները թաղված են քաղաքակրթության պատմության վաղ անցյալում և, միաժամանակ, արդիական է ու սինթեզում է Արևմուտքի և Արևելքի կեր-

պարվեստի լավագույն ավանդները։ Այդ է պատճառը, որ Սարյանի արվեստը հասկանալի է բոլորին և լայն ժողովրդականություն է վայելում ոչ միայն մեզանում, այլև աշխարհի բոլոր ծայրերում։

Հայրենի և համաշխարհային արվեստի զարգացմանը մատուցած ծառայությունների համար Վարպետը վայելում է ժողովրդի ջերմ սերն ու հարգանքը։ «Ես իմ ամբողջ հաջողություններով,— սիրում է կրկնել Սարյանը,— պարտական եմ իմ ժողովրդին։ Ժողովուրդն է, որ սովորեցնում է աշխատել, ստեղծագործել։ Ժողովուրդն է ստեղծում արվեստը իր զավակների ձեռքով։ Ես երջանիկ եմ ու հպարտ, որ պատկանում եմ այդ զավակների թվին։ Իմ ողջ կյանքում և այժմ ինձ թափ ու կորով, ապրելու և գործելու ուժ է տալիս ժողովրդի սերը։ Այդ պատճառով էլ ինձ շնորհված ամեն մի պատիվ ես համարում եմ պատիվ իմ ժողովրդին»։ Այդ գիտե ժողովուրդը։ Եվ այսօր, երբ Սարյանը արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման, ժողովուրդը բարի մաղթանքներ է հղում իր հանճարեղ զավակին՝ մեծ Վարպետին։

Վ. ՄԱՔԵԼՈՍՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԲԺԻՇԿՆ ՈՒ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի և ՍՍՌՄ բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Լևոն Անդրեասի Հովհաննիսյանի ծննդյան 80 և բժշկական, գիտա-մանկավարժական ու հասարակական գործունեության 55 տարին։

Կյանքի փառավոր ուղի է անցել պատվարժան հոբելյարը. անդամ շատ համառոտ հետադարձ հայացքը փայլուն կերպով վկայում է այդ մասին։

Լ. Հովհաննիսյանը ծնվել է 1885 թ. Թբիլիսի քաղաքում։ 1909 թ. ավարտելով Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը, նա իր բժշկական գործունեությունը սկսում է Թբիլիսիում, որոշ ժամանակ աշխատում է Ալավերդու հանքերում, ինչպես նաև Ղազախստանում, որտեղ գլխավորում է Կարմիր խաչի բժշկական ջոկատը սովի և համաճարակների դեմ մղված պայքարում։

Լ. Հովհաննիսյանի բուռն և բազմակողմանի գործունեությունը սկսվում է Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Նա խոշոր մասնակցություն է ունենում Երևանի համալսարանի բժշկական ֆակուլտետի հիմնադրման և հետագայում Երևանի բժշկական ինստիտուտի կազմակերպման գործում։ 1923 թ. մինչև այսօր Լ. Հովհաննիսյանը անընդմեջ ղեկավարում է այդ ինստիտուտի ներքին հիվանդությունների դիագնոստիկայի ամբիոնը։ Հայաստանում համարյա չկան բժիշկներ, որոնք լսած չլինեն սիրելի ուսուցչի հետաքրքրական և տպավորիչ դասախոսությունները, որոնք այս կամ այն կերպ աշակերտած չլինեն նրան։

Լ. Հովհաննիսյանը պատկանում է այն գիտնականների շարքին, որոնք ունեն լայն մտահորիզոն և չեն սահմանափակում իրենց գործունեությունը առանձին նեղ բնագավառներով։ Դեռևս 1920 թ. Լ. Հովհաննիսյանը ղեկավարում է Հայաստանում մալարիայի դեմ պայքարը։



Նրա անմիջական նախաձեռնությամբ 1923 թ. Երևանում հիմնադրվում է Տրոպիկական ինստիտուտը, որի հիման վրա հետագայում կազմակերպվում է Մալարիայի և բժշկական պարազիտալոգիայի ինստիտուտը։

Հայաստանի հարուստ և բազմապիսի հանքային ջրերը չեն վրիպել գիտնականի ուշադրությունից։ Սկսած 1920 թ. նա սիստեմատիկ կերպով ուսումնասիրում է հանրապետության առողջարանային վայրերը և 1936 թ. լույս է ընծ-